

Դ.

ՏԵՍՈՒՋ

Հ. ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ¹

1859 ՓԵՏՐՈՒԱՐ 2 — 1860 ՍԵՊՏ. 20 (ԸՆԴՀ. ԺՈՂ.)²

ՀՈԳԵՒՈՐ ՀԱՅՐ	Հ. ՂԵԻՈՆԴ ԱԼԻՇԱՆ՝ 1859 ³ ,
ՓՈԽ - ՏԵՍՈՒՋ	Հ. ԳՐԻԳՈՐԻՍ ՄԵՐՃԱՆՃԵԱՆ՝ 1859 չոկտեմբեր 28,
ՈՒՍՈՒՄՆԱՊԵՏ	Հ. ԲԵՐՈՎԻԷ ԻՖՐԱՋՃԵԱՆ («տեսուչ ուսմանց և վարժապետաց»)՝ շար. 1859 չոկտեմբեր 28-1860 Օգոստոս 4,
ՄԱՏԱԿԱՐԱՐ	Հ. ԳՐԻԳՈՐԻՍ ՄԵՐՃԱՆՃԵԱՆ (և «հոգ տնական իրաց»)՝ 1859 չոկտեմբեր 25-1873,
ՈՒՍՈՒՑԻՋ	Հ. ՍՈՒՔԻԱՍ ՊԱՐՈՆՆԱՆ («տեսուչ և վերականգու մամկտույն»)՝ շար. 1859 չոկտեմբեր 25 - 1864 Յուլիս 10,
ԱՇԽ. ԵՂԲԱՅՐ	ԵՂ. ՅՈՎԱԿ ՇԻՇՄԱՆՆԱՆ՝ շար. ց1862 Յունուար 20,

ԿԱՐԵՒՈՐ ԽԱՆՈԹՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հիւրմիւզեան Աբբահայր պաշտօնապէս կը հաղորդէ Հ. Ալիշանի իր ընտրութիւնը. նոյնը կը ծանուցանէ անոր գործակիցներուն, մինչեւ իսկ Մուրատեան Վարժարանի աշակերտութեան՝ իբրեւ պատասխան անոր մէկ ազնիւ գրոյն: Ընտրեալին նկատմամբ վերջնոյս կը գրէ. «Յորոյ ի խնամս վայելէք իբրեւ յամէ հետէ, զնոյն ինքն որպէս ընտրեալ յԱստուծոյ և նախանշանակեալ տայ Ձեզ ի Հայր, յԱռաջնորդ, ի Տեսուչ և ի խնամակալ» (գր. 1859 Փետրուար 26): Հ. Ալիշան որ ընտրութենէն առաջ շատ դժուարած էր՝ մինչեւ իսկ ըսելով. «Յառաւել քան զչափ և զխիղճ թուիմ յանդգնել անբնական յանձնառութեամբ տեսչութեանն պաշտաման», (գր. առ Հիւրմ. Արք. 1858 Դեկտ. 28), ի վերջոյ Աստուծոյ և Մեծաւորաց կամօքն կը թողու:

Հետաքրքրական է առ Աբբահայր գրած հետեւեալ պատասխանը՝ հաճապետի օծուն գրչով.

2 Մարտի, 1859. Բարիկ

Աստուածապատիւ Տէր Հայրապետ,

Իբրեկ ի գոշիս ամառ լուսինայ կենսաւիր վշտաց և կրից՝ և հաս ինձ խաչն խորհրդական, սքողեալ սիրով սեռն սիրելեաց և անարգամեծար շնորհիւ վեհի և Յ. Ժողովոյն, ի միջի պաճառագարդ և անպաճոյճ մաղրանաց և ծաղկանց Էդրարց, մանկտուշ և մոեմուց. և ընկալայ ոչ անարտօսը՝ իբրեւ առ ի տեսչութեան Աստուծոյ և սրբոց լորիս իմոցս պաշտպանաց ի ձեռն Ձեր յիս աւանդ, զՏեսչութիւն Մ. Վարժարանիս. և քե ոչ անխռով խնդրեամբ՝ գոնեա հաշատարմոքեամբ ջանացայց պահել զիստ կամաց տնօրինողացն, գործակցութեամբ վ. Էդրարցս և սատարութեամբ աղօթից և խորհրդոց Ուխտիս և Ժողովոյն և օրհնութեամբ վեհի. յորս յանձն լինիմ շնորհակալու մտօք և խոնարհ համբոյրիւ յուսացիր աչոյ Սրբութեանդ

Ն. Ծ. և Որդի

Հ. ՂԵՈՆԴ Մ. Ալիշանեան

Ո Կ

2. Կը սահմանուի փոփոխութիւնը՝ Ընդհ. Ժողովէն ընտրուելով Առաջիկայ Ուխտիս, բայց կը տնօրինուի երկարաձգել «մինչեւ ցաւարտ ուսմանց երիցագունից» (Ժող. Արձ.). ուստի «Վ. Հ. Ղեւոնդ երթիցէ առ աշտմ ի Մ. Վարժարան՝ վասն երկուց եւեթ ամաց, մինչեւ կատարեսցին ուսմունք երիցագունիցն աշակերտաց և արձակեսցին ի բաց, զի մի՛ եղծցի բարեկարգութիւն վար-